

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ**

ՈՐՈՇՈՒՄ
13 Մայիսի 2022, N 11 - 1

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Լսելով և քննարկելով Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարման ֆակուլտետի դեկանի՝ 2021-2022 ուսումնական տարվա առաջին կիսամյակում ֆակուլտետում իրականացված ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2018-2022 թթ. զարգացման ռազմավարությամբ նախատեսված գործողությունների կատարման մասին հաշվետվությունը (զեկուցող՝ կառավարման ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Մ.Է.Մովսիսյան)՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է.**

1. Կառավարման ֆակուլտետի ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների մասին հաշվետվությունն ընդունել ի գիտություն և կատարվածը գնահատել բավարար:
2. **Ֆակուլտետի դեկանատին՝**
 - 1) գիտական խորհրդի և ռեկտորատի որոշումները քննարկել ֆակուլտետի խորհրդի և ամբիոնների նիստերում, առկա թերությունների վերաբերյալ մշակել համապատասխան միջոցառումներ՝ դրանք շտկելու ուղղությամբ,
 - 2) ուշադրության կենտրոնում պահել ֆակուլտետում վարվող կադրային քաղաքականությունը, ամբիոնների կողմից դասախոսների ընտրության և համալրման գործընթացը՝ նախապատվություն տալով բանիմաց, ակտիվ գիտահետազոտական գործունեություն իրականացնող, մանկավարժական և մասնագիտական անհրաժշտ ունակություններ ունեցող կադրերին,
 - 3) հսկողություն իրականացնել դասալսումների գործընթացի նկատմամբ, ֆակուլտետի խորհրդում պարբերաբար քննարկել դրանց արդյունքները,
 - 4) ամբիոններում աշխատանքներ իրականացնել մագիստրոսական խմբերում դասավանդման մակարդակն ու մատուցվող նյութի որակը բարձրացնելու և բարձրորակ դասախոսական կադրերով ապահովելու ուղղությամբ,
 - 5) հսկողության տակ պահել դասամատյաններում ուսանողների հաճախումների և ակտիվության հաշվառման ու գնահատման գործընթացը,

- 6) ամբիոնների հետ միասին բարելավել կուրսղեկների աշխատանքը ինչպես առկա, այնպես էլ հեռակա ուսուցման ձևերում,
- 7) խրախուսել ուսումնամեթոդական ձեռնարկների, խնդրագրքերի, դասախոսությունների նյութերի նախապատրաստման և հրատարակման աշխատանքները,
- 8) ակտիվացնել ֆակուլտետի ուսանողների և դասախոսների մասնակցությունը ակադեմիական շարժունության ծրագրերին,
- 9) ակտիվացնել ուսանողական գիտական ընկերության ֆակուլտետային խորհրդի գործունեությունը՝ առավելագույնս ներգրավելով հետազոտական աշխատանքի ունակություններով օժտված ուսանողներին և մագիստրանտներին,
- 10) հետևել աշխատանքային կարգապահությանը՝ խախտումների ցանկացած դեպք դարձնելով առանձին քննարկման առարկա,
- 11) առավել արդյունավետ դարձնել դեկանատի աշխատողների կողմից ուսանողներին մատուցվող ծառայությունները:

3. **Կառավարման ֆակուլտետի կազմի մեջ մտնող ամբիոնի վարիչներին՝**

- 1) պարբերաբար վերանայել և արդիականացնել բոլոր մասնագիտությունների ու մասնագիտացումների ուսումնական պլաններն ու առարկայական ծրագրերը՝ ուղղված գործատուների պահանջների և կրթություն-աշխատաշուկա կապի ամրապնդմանը,
- 2) մշակել և թարմացնել դասավանդվող բոլոր դասընթացների առարկայական ծրագրերը՝ միասնական մեթոդաբանությամբ և կառուցվածքով,
- 3) խրախուսել հայալեզու գրքերի, ուսումնական ձեռնարկների, դասախոսությունների նյութերի, խնդիրների և թեստերի ժողովածուների հրատարակումը,
- 4) սահմանել քննական և ստուգարքային առարկաների ակտիվության և ամփոփիչ ստուգումների գնահատման միասնական մոտեցումներ,
- 5) ակտիվացնել գիտահետազոտական աշխատանքները, բարձրացնել գիտական հետազոտությունների մակարդակն ու որակը,
- 6) մշակել փորձառությունների նոր ծրագրեր, պատշաճ հսկողություն իրականացնել փորձառության ընթացքի նկատմամբ,
- 7) խրախուսել «Erasmus+» ծրագրի շրջանակներում դասախոսների փոխանակման ու գործընկեր համալսարաններում դասավանդման ծրագրերին ամբիոնների դասախոսների ակտիվ մասնակցությունը,
- 8) ապահովել կրթական և առարկայական ծրագրերի՝ առաջավոր օտարերկրյա պետությունների համալսարանների ծրագրերի հետ համապատասխանությունը,
- 9) ապահովել ակադեմիական փոխանակության ծրագրերով օտարերկրյա պետությունների համալսարաններում դասավանդած կամ հետազոտություններ իրականացրած մասնագետների փորձի տարածումը ամբիոնի աշխատողների շրջանում,

